ՍՈՒԲՍԻԴԻԱՅԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 19/02

ք. Արտաշատ «14» «հունվարի» 2019թ

ՀՀ Արարատի մարզպետարանը, ի դեմս աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Մ. Աբրահամյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ Նվիրատու մի կողմից և Պ. Սևակի անվան տուն-թանգարանը՝ ի դեմս Սևակ Ղազարյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ Նվիրառու մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշումով հաստատված կարգի և «2019թ. ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի հավելված N 1-ի աղյուսակ N 1-ի ՀՀ Արարատի մարզպետարանին գումար հատկացնելու մասին» կնքեցին սույն պայմանագիրը:

1.Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով և «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով սահմանված համապատասխան հատկացումների շրջանակներում Նվիրատուն Նվիրառուին է հատկացնում 9130,4 հազ.դրամ/այդ թվում ԱԱՀ/ ինը միլիոն մեկ հարյուր երեսուն հազար չորս հարյուր դրամ/ պահպանման ծախսերի համար:

2.Սուբսիդիան տրամադրելու և ծախսելու կարգը

1.2. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

2.2 Նվիրառուն պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան և ապահովի սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված նպատակների իրականացման հետ կապված փաստաթղթերին ծանոթանալու՝ Նվիրատուի ներկայացուցչի հնարավորությունը:

2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո Նվիրատուն սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը փոխանցում է Նվիրառուի գանձապետական հաշվին, իսկ տեղական գանձապետական բաժանմունքը Նվիրառուին գումարները հատկացնում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.Հաշվետվությունը

3.1. Հաշվետվությունը ներկայացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.Այլ դրույթներ

4.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 30-ը:

4.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

4.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5.Կողմերի իրավաբանական հասցեները

Նվիրատու	Նվիրառու
Արարատի՝ մարզպետարան	«Պ. Սևակի անվան տուն-թանգարան» ՊՈԱԿ
Ք.Արտաշատ,Օգոստոսի 23/60	գ. Զանգակատուն
Ֆինանսների նախարարության ԳՎ	ՀՀ ֆինանսների նախարարության գ/վ
հ/հ 900411068027	հհ 900428000278
հվհհ 04204668	հվհհ 04105615
Գլխավոր քարտուղարի ժ/պ՝	Տնօրեն՝
Ա. Գերմոյան	Ա. Ղազարյան